ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360 Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.02.2012թ.
156-ի 9

Մտավոր սեփականության
գործակալության պետ
պարոն Արմեն Ազիզյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ազիզյան,

Մեզ է դիմել քաղաքացի Էդգար Հակոբյանը՝ խնդրելով օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: 2012թ.-ի հունվարի 23-ին նա գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Հայաստանի Հանրապետությունում գործող Մտավոր սեփականության գործակալությունում ի՞նչ ընթացակարգով և ինչպիսի հանգամանքների առկայության դեպքում են գրանցվում բառային ապրանքային նշանները:
2. Հայաստանի Հանրապետությունում գործող Մտավոր սեփականության գործակալությունում բառային ապրանքային նշանի գրանցումից առաջ ինչպիսի՞ գործողություններ են կատարվում՝ ստուգելու համար բառային ապրանքային նշանի գրանցման համար ներկայացված հայտի իմնավորվածությունն ու ՀՀ օրենքներին համապատասխանության հարցը:
3. Հայաստանի Հանրապետությունում գործող Մտավոր սեփականության գործակալությունում որո՞նք են ապրանքային նշանի գրանցումն մերժելու հիմքերը:
4. Հայաստանի Հանրապետությունում գործող Մտավոր սեփականության գործակալությունում ապրանքայի նշանի գրանցումից հետո այն գրանցած ֆիզիկական կամ իրավաբանական անձը ի՞նչ իրավուքներ է ձեռք բերում գրանցված ապրանքային նշանի նկատմամբ:
5. Ո՞ր դեպքերում է հնարավոր օտարերկրյա պետությունում ավելի վաղ գրանցված նույնական ապրանքային նշանի առկայությունը ՀՀ-ում գործող մտավոր սեփականության գործակալության համար ապրանքային նշանի գրանցման հայտը մերժելու հիմք ծառայել:
6. Հայաստանի Հանրապետությունում գործող մտավոր սեփականության գործակալությունը ՀՀ "Միջազգային պայամանգրերի մասին" օրենքի 13-րդ հոդվածի համաձայն կնքե՞լ է արդյոք որևէ միջգերատեսչական միջազգային պայամանագիր, և եթե այո, ապա որոնք են այդ միջգերատեսչական միջազգային պայամանագրերը (խնդրում եմ թվարկեք դրանք):
7. Ին՞չ պետք է հասկանալ հետյալ արտահայտության տակ՝ "համընդհանուր օգտագործման (ջեներիկ) անվանում", և որ իրավական ակտում է տրված վերոգրյալ արտահայտության հասկացությունը:
8. Հայաստանի Հանրապետությունում գործող մտավոր սեփականության գործակալությունն օրենքով սահմանված ինչպիսի՞ հանագամանքների

առկայության դեպքում է արձանագրում անձի հեղինակային իրավունքների խախտման հնարավորությունն ու առկայությունը:

9. Հայաստանի Հանրապետությունում գործող մտավոր սեփականության գործակալությունն պարտավո՞ր է արդյոք վերացնել իր կողմից նախկինում կատարված ապրանքային նշանի գրանցումը և անձին զրկել այդ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավուքնից՝ նման պարտավորություն նախատեսող դտական ակտի առկայության դեպքում:
10. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում գործող մտավոր սեփականության գործակալության՝ իր կողմից նախկինում կատարված ապրանքային նշանի գրանցումը վերացնելու համար միակ հիմք է հանդիսանում համապատասխան պարտավորություն նախատեսող դատական ակտը:

Սակայն նա որևէ գրավոր պատասխան չի ստացել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ ևս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գևորգ Հայրապետյան